Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
հունիսի 30-ի N 1017 - Ն որոշման

# Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԲԻԶՆԵՍ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Իրականացման ժամկետը |
|---|---|---|
| 1. | Հարկային մարմնի գործառույթների հստակեցման շրջանակներում հարկային տեսչությունների գործառույթներից հարկ վճարողների սպասարկման գործառույթների տարանջատում, տվյալների մշակման և վերլուծությունների իրականացման բաժնի գործառույթների հստակեցում: Այդ նպատակով՝ | |
| | - Երևանի հարկային տեսչություններում կառուցվածքային փոփոխությունների իրականացում՝ հարկ վճարողների սպասարկման և տվյալների մշակման բաժինների վերակազմակերպում տեղեկատվության և վերլուծության բաժնի | 2011 թ. |
| | - հարկ վճարողների սպասարկման հետևյալ գործառույթների կենտրոնացում սպասարկման կենտրոններում՝<br>հարկային վարչարարությունը կարգավորող իրավական ակտերի ձեռքբերման, դրանց հիմնական դրույթների մասին տեղեկատվության տրամադրում, իր իրավասությունների շրջանակներում դրանց պարզաբանումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, հաշվետվությունների լրացման հետ կապված հարցերում աջակցություն, դրանց ներկայացման և հարկերի վճարման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացում, հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման պայմանագրի կնքման գործընթացի ապահովում, հարկ վճարողին էլեկտրոնային ծածկագրի և գաղտնաբառի տրամադրում, համապատասխան համակարգչային ծրագրերի և սարքերի (տերմինալ) միջոցով էլեկտրոնային հաշվետվությունների հանձնման հնարավորությունների ապահովում, նորաստեղծ հարկ վճարողներին աջակցելու նպատակով այցելություններ, հարկ վճարողների համար սեմինարների կազմակերպում և անցկացում | 2012-2013 թթ. |
| | - տեղեկատվական և վերլուծական կենտրոնների վերլուծությունների համար անհրաժեշտ մեթոդական ուղեցույցների պատրաստում | 2011 թ. |
| 2. | Հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման լիարժեք համակարգի ներդրում | 2012 թ. |

| | | |
|---|---|---|
| 3. | Հարկ վճարողների սպասարկմանն օժանդակելուն ուղղված հեռախոսազանգերի ժամանակակից կենտրոնի (Call Center) գործարկում մատուցվող ծառայությունների հետագա կատարելագործմամբ | 2011 թ. |
| 4. | ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի հարկային բարեփոխումների 2011-2013 թթ. ծրագրից բխող՝ վերադաս և տարածքային հարկային մարմինների կառուցվածքային բարեփոխումներ՝ կրճատելով նաև հարկային տեսչությունների քանակը | 2013 թ. |
| 5. | Միջազգային առաջավոր փորձի հիման վրա հարկային մարմնում ներքին աուդիտի նոր, ամբողջական համակարգի ներդրում և կատարելագործում | 2012 թ. |
| 6. | Հարկ վճարողների ինքնագնահատման և հարկային պարտավորությունների կամավոր կատարման ապահովման մեխանիզմների ներդրում | |
| | 1) հարկ վճարողների էլեկտրոնային հաշվառում, նույնականացում | ֆինանսավորումից 6 ամիս հետո |
| | 2) հաշվետվությունների, հայտարարագրերի, տեղեկությունների և այլ փաստաթղթերի ընդունում և էլեկտրոնային մշակում | ֆինանսավորումից 6 ամիս հետո |
| | 3) վերլուծական կարողությունների ուժեղացում | 2013 թ. |
| | 4) հարկային մարմնում առկա տվյալների հիման վրա ստացվող վերլուծական և վիճակագրական հաշվետվությունների ավելացում, նոր հաշվետվությունների ներդնում | 2012 թ. |
| | 5) անձնական հաշվի քարտերի էլեկտրոնային վարում | 2012 թ. |
| | 6) ավելացված արժեքի հարկի գերավճարների վերադարձ և հարկային գերավճարների հաշվանցում | 2012 թ. |
| | 7) դրամարկղային մեքենաների, գրանցման գրքերի, դրամարկղային գրքերի հաշվառման ավտոմատացված վարում | 2012 թ. |
| | 8) ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի շտեմարաններում օգտագործվող ծրագրային միջոցների լիցենզիաների ձեռքբերում | ֆինանսավորումից 6 ամիս հետո |
| 7. | Ռիսկային գործոնների կառավարման վրա հիմնված ժամանակակից հարկային հսկողության ապահովում | |
| | 1) ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի կատարելագործում՝ ինտեգրելով այն սույն կետի 2-րդ և 3-րդ մասերում ներգրավված գործընթացներին | 2012 թ. |
| | 2) 3-րդ անձանցից ստացվող տեղեկությունների մշակում | 2012 թ. |
| | 3) կենտրոնական գանձապետարանից ստացված տվյալների ավտոմատացված գրանցում | 2012 թ. |
| | 4) կամերալ ուսումնասիրությունների ավտոմատացված ծրագիր | 2012 թ. |
| | 5) հարկային մարմնի կողմից հարկային պարտավորությունների ստուգման, ուսումնասիրության և վերագնահատման աշխատանքների նոր որակական աստիճանի ապահովում, | 2013թ. |

| | | |
|---|---|---|
| | հարկային պարտավորությունների հաշվարկման անուղղակի մեթոդների կիրառման կատարելագործում | |
| | 6) ստուգման ակտերի էլեկտրոնային լրացում | 2012 թ. |
| | 7) իրավախախտումների հաշվառում, հայցային աշխատանքների կազմակերպում, հարկադիր գանձումների և հարկ վճարողին ծանուցումների ավտոմատացված ներկայացման համակարգ | 2012թ. |
| 8. | Հերթերի կառավարման համակարգի ներդրում | ֆինանսավորումից 18 ամիս հետո |
| 9. | Տվյալների մշակման կենտրոնի (սերվերային սենյակ) ստեղծում | ֆինանսավորումից 9 ամիս հետո |
| 10. | Համալրված համակարգի տեխնիկական ապահովման հզորացում | ֆինանսավորումից 9 ամիս հետո |
| 11. | Գործընթացների միասնական կառավարման և էլկտրոնային արխիվի համակարգերի ստեղծում | ֆինանսավորումից 18 ամիս հետո |
| 12. | Պահուստային տվյալների մշակման կենտրոնի ստեղծում | ֆինանսավորումից 12 ամիս հետո |
| 13. | Ներքին ցանցի վերազինում և արդիականացում | ֆինանսավորումից 6 ամիս հետո |
| 14. | Հարկերի էլեկտրոնային վճարումների համակարգի ներդնում | ֆինանսավորումից 9 ամիս հետո |
| 15. | Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի ներքին աուդիտի ներդնում | ֆինանսավորումից 6 ամիս հետո |
| 16. | ԻՊ (IP) հեռախոսակապի ներդրում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում | ֆինանսավորումից 3 ամիս հետո |
| 17. | Տվյալների մշակման միասնական շտեմարանի (Data Warehouse) ստեղծում ներառյալ նախագծումը և տարբեր համակարգերից տվյալների տեղափոխումը | ֆինանսավորումից 6 ամիս հետո |
| 18. | ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի համակարգիչների փոխարինում դյուրակիր համակարգիչներով (thin client) | ֆինանսավորումից 6 ամիս հետո |
| 19. | Մարդկային ռեսուրսների կառավարման և կատարողականի գնահատման ավտոմատ համակարգեր | ֆինանսավորումից 6 ամիս հետո |
| 20. | Հարկային ծառայողների ընթացիկ ուսումնական և իրազեկման միջոցառումների կազմակերպման համար՝ Երևանում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի ուսումնական կենտրոնի գործարկում | 2012 թ. |
| 21. | Հարկային ծառայողների երկարաժամկետ ուսումնական միջոցառումների կազմակերպման համար՝ Դիլիջանում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի ուսումնական կենտրոնի գործարկում | 2012 թ. |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ